

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի Քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի 2014թ հունվարից-սեպտեմբեր ամիսների ընթացքում կատարված և կատարվելիք աշխատանքների վերաբերյալ

հաշվետվություն

ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2014 թ. Պետական բյուջեով Արագածոտնի մարզի մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների համար նախատեսվել է 97.144.0 մլն. դրամ գումար: Նշված ծրագրի շրջանակներում Արագածոտնի մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացվում է 332.4 կմ՝ 66.6 մլն դրամ արժեքով ձմեռային պահպանության աշխատանքներ և նույն նշանակության 49.5 կմ ավտոճանապարհների ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքներ՝ 30.544.0 մլն դրամ արժեքով:

ՀՀ 2014 թ. պետական բյուջեի ֆինանսավորմամբ Արագածոտնի մարզում իրականացվում է՝

1. Մ-1 Երևան-Աշտարակ միջպետական նշանակության Ա/Ճ-ի /Հյուսիս-Հարավ/ 10,7 կմ հատվածը 23 մլն. դրոլար արժեքով, Ասիական բանկի ֆինանսավորմամբ:
2. Մ-1 Աշտարակ-Թալին միջպետական նշանակության ավտոճանապարհի /Հյուսիս-Հարավ/ համար 40մլն.դոլար արժեքով Ասիական բանկի ֆինանսավորմամբ:
3. 2013-2014թթ.Արմավիր -Գյումրի-Վրաստանի սահման/Քարակերտ-Գետափ/հատվածը 24 կմ 2մլրդ 300մլն դրամ արժեքով համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ: Աշխատանքները ավարտվել են:
4. Կարբի համայնքի ներհամայնքային ճանապարհի վերանորոգում՝ 30350.0 պետ/բյուջե, աշխատանքները ընթացքի մեջ են:
5. Բյուրական համայնքի ներհամայնքային ճանապարհի վերանորոգում՝ 31350.0 պետ/բյուջե, աշխատանքները ընթացքի մեջ են:
6. Ուշի համայնքի ներհամայնքային ճանապարհի վերանորոգում՝ 31350.0 պետ/բյուջե, աշխատանքները ընթացքի մեջ են:
7. Կարմրաշեն համայնքի ներհամայնքային ճանապարհի վերանորոգում՝ 7476.0 պետ/բյուջե, աշխատանքները ընթացքի մեջ են:
8. Թալին համայնքի ներհամայնքային ճանապարհի վերանորոգում՝ 17765.0 պետ/բյուջե, աշխատանքները ընթացքի մեջ են:

ԳԱԶԱՖԻԿԱՑՈՒՄ

01.10.2014թ. դրությամբ գազաֆիկացված են 15144 բնակարաններ, որոնցից 5142-ը բազմաբնակարան շենքերում, իսկ 10002-ը՝ առանձնատներում: Ըստ տարածաշրջանների՝

Տարածաշրջանը	Բնակավայրերի թիվը	Ընդ. բաժանորդ	Այդ թվում	
			ԲԲՇ	Առանձնատուն
Աշտարակ	16	8766	3512	5254
Թալին	16	3214	720	2494
Ապարան	24	3164	910	2254
Արագած				
Ընդամենը	56	15144	5142	10002

Փաստացի 56 համայնքներում կան գազասպառողներ:

2014 թվականին <<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի վերլուծության և կառավարման գրասենյակ>>-ի (IFAD) և համայնքների համաֆինանսավորման միջոցներով ավարտման փուլում են՝ Ալազյազ, Քուչակ, Կոշ, Ուջան, Սասունիկ, Ապարան, Արագած, Արայի, Հարթավան, Շենավան, Վարդենիս, Վարդենուտ, Ափնա և Ծաղկաշեն համայնքների գազաֆիկացման աշխատանքները, որի ընդհանուր արժեքը կազմում է 2.մլրդ423 մլն. դրամ, կատարվելու է նաև վերը նշված համայնքներում լրացուցիչ գազաֆիկացման աշխատանքներ/աշխատանքները նախագծման ավարտման փուլում են և արժեքը կազմում է մոտավորապես 269 մլն դրամ/:

2014 թվականին <<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի վերլուծության և կառավարման գրասենյակ>>-ի (IFAD) և համայնքների համաֆինանսավորման միջոցներով նախատեսվում է կատարել գազաֆիկացման աշխատանքներ Սասունիկ, Կարբի, Օհանավան, Ապարան, Աղծր համայնքներում, ինչպես նաև ՀՀ Նախագահի 2013թ նախնտրականով Արտենիև Արագածավան համայնքների գազաֆիկացման աշխատանքներ նախագծման փուլում են:

ՀՀ Արագածոտնի մարզի Ղազարավան համայնքում 2014 թ կառուցվել է 186 գ/մ գազատար 886 000 դրամ արժողությամբ համայնքի բյուջեով :

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ Հ.Ղոնախյան